

ԱՂՎԱՆԻՑ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Ա. Մ.

Երկար պայքարից հետո Սասանյան Պարսկաստանին հաջողվեց վերացնել Այսրկովկասում պատվար հանդիսացող իրեն թշնամի Արշակունիների թագավորությունը Հայաստանում, և 428 թ. այստեղ ստեղծվեց մարզպանություն: Պարսկաստանը չէր բավարարվելու միայն Հայաստանով. քանի որ դժվարին արգելքը հաղթահարված էր, ապա նոր վարչակարգը պարտադրվեց մյուս պետություններին՝ Վիրքին և մասնավորապես Աղվանքին: Նոր վարչակարգի ամրապնդումից հետո իր նպատակների մեջ հետևողական պարսից արքունիքը փորձում էր վերացնել նախարարական իշխանությունը, որի օրինակն էր Մեծ Հայքը: Դրա հետևանքով տարածաշրջանում տեղի էր ունենում ազատագրական պայքար ամբողջ V դարի ընթացքում:

Մարզպանական վարչակարգի հաստատումը, բնական է, ուղեկցվում էր թագավորական իշխանության վերացմամբ, իսկ եթե լինում էր բացառություն, և թագավորական իշխանությունը պահպանվում էր, ապա դա ձևական բնույթ էր կրում: Ամբողջ իշխանությունը երկրում պատկանում էր մարզպանին, քանի որ վերջինս, լինելով պարսկական արքունիքի կողմից նշանակված պաշտոնյա, իրականացնում էր Պարսկաստանի պարտադրած քաղաքականությունը, մինչդեռ թագավորական իշխանությունը, ինչքան էլ ենթակա լիներ Սասանյաններին, գերադասում էր ազգային շահը:

Այսրկովկասն իրեն ենթարկելու Պարսկաստանի քաղաքականությունը շարունակվեց հետագայում: 457 թ., Հազկերտ Բ-ի մահից հետո, նրա երկու որդիների միջև պայքար է սկսվում՝ գահին տիրանալու համար: Օգտվելով այս հանգամանքից՝ Աղվանից Վաչե Բ թագավորն ապստամբություն է բարձրացնում՝ փորձելով թոթափել պարսկական տիրապետությունը: Սկզբնական շրջանում ապստամբները լուրջ հաջողությունների են հասնում՝ մի քանի ձակատամարտերում ջախջախելով պարսից զերակշիռ ուժերը¹: Սակայն արյաց արքա Պերոզը (457-484 թթ.) կարողանում է հասնել ռազմական գերակշռության, և Աղվանքում անկախության համար մղվող պայքարը ավարտվում է պարտությամբ: 461 թ.² մեծ դժվարությամբ կա-րողանալով ճնշել Վաչե Բ-ի գլխավորությամբ հակապարսկական ապստամբությունն Աղվանքում և զգալով, թե ինչ վտանգ է ներկայացնում թագավորական իշխանությունը, նաև համոզված չլինելով, թե ապստամբությունն ապագայում չի կրկնվելու՝ Պերոզը Վաչե Բ-ին հեռացնում է գահից և Աղվանքը վերածում մարզպանության: Այդ կապակցությամբ Մովսես Կաղանկատվացին նշում է.

¹ Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի (այսուհետև՝ Կաղանկատուացի) քննական բնագիրը և ներածությունը Վարազ Ստաբլյանի, Ե., 1983, էջ 16:

² Մվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – VIII դարը ներառյալ), Ե., 2006, էջ 197:

«...քանզի ամենաչար և ամբարիշտ թագաւորն Պարսից Պերոզ զայրացեալ մոլեգներ իբրև զկատաղեալ շուն, կամէր բառնալ զամենայն թագաւորութիւնս աշխարհի միանգամայն, շարժել զեկեղեցիս և բառնալ զկարգ քրիստոնէութեան և հաստատել կարգել յիւրում իշխանութեանն զմոգութեան դիւապաշտութիւնն...»³: Սույն հատվածը ցույց է տալիս Աղվանքի քաղաքական կյանքում Պերոզի մտքած նոր վարչական փոփոխությունները⁴: Եթե վերացվում էր թագավորությունը, ապա նաև արմատախիլ էր արվում ամբողջ թագավորական կառույցը՝ տեղի տալով նոր վարչակարգի: Իսկ վերջինս պարտադրում էր իր պայմանները: Մովսես Կաղանկատվացու վկայությունից գիտենք, որ հեռանալիս թագավորին տրվեց միայն հազար երդ՝ որպես հայրենական ժառանգություն. «Իսկ սա հաճեցաւ միայն զսեպհականն առնուլ բաժին իւր, գոր ի հօրէն էր առեալ հազար երդ»⁵: Այսինքն՝ Վաչեին բաժին ընկան միայն հայրական կալվածքները, իսկ արդեն նախկին արքունական հողերը մնացին որպես պարսկական արքունիքի սեփականություն⁶: Դա մի ամբողջ պետական քաղաքական մշակված համակարգ էր՝ նախ հեռացնել թագավորին՝ գրավելով արքունական հողերը, ապա, եթե հնարավոր է, ոչնչացնել եկեղեցական և նախարարական դասը: Սա մի միջոցառում էր, որ պարսիկները կիրառում էին մարզպանություն ստեղծելիս⁷:

Վաչե Բ-ի հետագա ճակատագրի վերաբերյալ պատմիչը լռում է: Ուսումնասիրողները գտնում են, որ նախկին թագավորը մեկնել է Մազքթաց աշխարհ⁸ կամ զահից հեռանալուց հետո հաստատվել է Արցախի Ավետարանոց գյուղում⁹: Սակայն, ինչպես նկատել է Ն. Սվազյանը, երկու կարծիքներն էլ ճիշտ չեն, քանի որ առաջինը հիմնվում է Աղվանից Մազքթաց թագավորների ենթադրյալ կապի վրա, իսկ երկրորդը նպատակ ունի ընդգծելու նրա ծագման աստվածային բնույթը և բարձրացնել հեղինակությունը¹⁰: Վաչեն մնացել է հայրական կալվածքում՝ որպես պատվավոր գերի: Հավանական է, որ այդ մասին է խոսում այն հանգամանքը, որ պատմիչը շեշտում է հայրական կալվածքի մասին: Ենթադրում ենք, որ կասկածամիտ պարսիկները չէին թողնի Վաչեի նման վտանգավոր քաղաքական գործչին հաստատվել Չողում կամ մեկ այլ վայրում, ինչը հղի էր վտանգավոր հետևանքներով, այլ պետք է պահեին տեսադաշտում՝ երկրի մայրաքաղաք Կապադակում՝ մշտական հսկողության տակ:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե մարզպանական վարչակարգը ինչու պարտադրվեց նախ Հայաստանին, ապա այսրկովկասյան

³ Կաղանկատուացի, էջ 42:

⁴ Սվազյան Ն., նշվ. աշխ., էջ 202:

⁵ Կաղանկատուացի, էջ 17:

⁶ Այսպես՝ Մեծ Հայքում Արշակունիների ոստան Այրարատն անցավ Պարսկաստանին:

⁷ Սվազյան Ն., նշվ. աշխ., էջ 202:

⁸ Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Ե., 1984, էջ 194:

⁹ Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տիֆլիս, 1858, էջ 248:

¹⁰ Սվազյան Ն., նշվ. աշխ., էջ 198:

մյուս երկրներին, կարծում ենք, որ այդ հարցին արդեն պատասխանել ենք՝ նկատի ունենալով Մեծ Հայքի նշանակությունը, ռազմական ուժը, աշխարհագրական դիրքը և այլ գործոններ, որոնք պարսիկները հաշվի էին առնում իրենց գործունեության ամբողջ ընթացքում: Ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղվանքում մարզպանական վարչակարգի ստեղծումն առաջ բերեց տարածքային փոփոխություններ. ստեղծվեցին նոր վարչական միավորներ՝ ի հաշիվ մեկ և հոգուտ մյուս պետությունների: Դա միջոցառում էր, որով Պարսկաստանը ոչ միայն փորձում էր թուլացնել ու ջլատել Հայաստանը, այլև ստեղծում էր հարկային-վարչական մեկ միավոր¹¹: Վերջինս, թեպետ բաժանված, այնուամենայնիվ, Այսրկովկասի ամենամեծ վարչատարածքային միավորն էր: Եվ վերը նշված գործոնների հետևանքով էլ հունա-հռոմեական աղբյուրների՝ Կովկասյան Ալբանիային և հայ մատենագիրների «բուն աշխարհ Աղուանից» երկրին մարզպանություն կազմավորելիս միացվեցին երկու հայկական աշխարհները՝ Ուտիքն ու Արցախը, որի մասին մեզ ամենաստույգ տեղեկությունն է հայտնում Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցը». «Աշխարհ Աղբանիա, այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կուկասով, մինչեւ ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով. թեպէտ եւ աստի ցԿուր գամենայն սահմանս հանեալ է ի Հայոց»¹²: Ապա մի փոքր ուշ տալիս է «Հայաստանից հանված» Ուտիքի և Արցախի աշխարհագրական նկարագրությունը: «Արցախ յերի կալով Սիւնեաց. ունի գաւառս երկոտասան. զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, Մեծկուանս, զՀարճաւանս, զՄուխանս, զՊիանս, զՊաճկանս, զՄիսականիս, զԿոտակ, զՔուստիփառէնս, զԿոխտ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց» և «Ուտի առ մտից կայ Երասխայ ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ. ունի գաւառս զոր Աղուանք ունին՝ Եւթն. Արանոտ, Տոն, Ռոտպացեան, Աղուէ, Տուչքատակ, Գարդման, Շիկաշէն, Ուտի առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք»¹³: Ինչպես երևում է՝ մանրամասն տալով Ուտիքի և Արցախի նկարագրությունը և նրանց միացումը Աղվանքին, Անանիա Շիրակացին չի նշում այդ փոփոխությունների ժամանակը: Կարծում ենք՝ Աղվանքի համար այդ փոփոխությունները կատարվեցին 460-ական թթ.:

Երբ Պերոզը 461 թ. Վաչե Բ-ին հեռացնում է գահից, Աղվանքը վերածվում է մարզպանության¹⁴:

Նոր

վարչատարածքային

միավորի

¹¹ Սվազյան Հ., *Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը*, [Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1979, N 4, էջ 213]:

¹² *Աշխարհացոյց Սովսեսի Խորենացոյ յաւելուածովք նախնեաց (այսուհետև՝ Աշխարհացոյց), Վենետիկ, 1881, էջ 28-29:*

¹³ Նույն տեղում, էջ 33:

¹⁴ Ուսումնասիրողները միակարծիք չեն Աղվանքում մարզպանության կազմավորման թվականի հարցի շուրջ: Ս. Երեմյանը գտնում է, որ մարզպանությունը կազմավորվել է 461 թ. (տե՛ս *История СССР*, кн. II, ч. III-IV (макет), М.-Л., 1939, с. 161, Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, էջ 194): Ս. Երեմյանի տեսակետին է հետևում Կ. Տրևերը, որն այդ առիթով նշում է. «Վաչե II-ը մոտ 461 թ. հրաժարվեց գահից, և դրանից հետո Աղվանքը կառավարում էին պարսից մարզպանները» [Треввер К. Очерки по истории и культуре Кавказской Албании (IV в. до н. э. – VI в. н. э.) М.-Л., 1959, с. 225]. Բ. Ուլուբաբյանը նշում է 428 թ. [տե՛ս *Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, Ե., 1981, էջ 127: Նույնի՝ Աղվանից թագավորական տան հարցի շուրջը (Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N 7, էջ 53, 60): Բ. Հարությունյանը գտնում է,*

մեջ էին մտնում «գրուն աշխարհն Աղուանից, որ ընդ մեջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»¹⁵, 23002 կմ² տարածությամբ¹⁶, հայկական Ուտիքը և Արցախը՝ 26493 կմ² տարածքով¹⁷: Բռնի ուժով կազմված մարզպանությունը կրում է «Աղուանք» անունը, որի սահմանները հյուսիսում կազմում էին Կերատուանյան լեռները, արեւելքում՝ Կասախից ծովը, արևմուտքում՝ Իբերիան, իսկ հարավում՝ արդեն Արաքս գետը. վերջինս սահման է դառնում Հայաստանի և Աղվանից մարզպանության միջև: Արցախը և Ուտիքը պարսից բռնատիրության կողմից անջատվեցին Հայաստանից և բուն Աղվանքի (անդրկուրյան երկիր) հետ միասին կազմեցին մեկ մարզպանություն, որն էլ բաղկացուցիչ ավելի մեծ մասի անունից կոչվում էր Աղվանք, Աղվանից մարզպանություն¹⁸: Ստեղծելով նոր վարչական միավոր՝ Պերոզի հրամանով վերակառուցվում է Պարտավ քաղաքը, որն էլ դառնում է Աղվանից մարզպանության մայրաքաղաք. «Եւ ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի, շինեցաւ ի Վաչէ Պերոզապար մեծ քաղաքն, որ այժմ կոչի Պարտաւ»¹⁹: Կարծում ենք, որ ոչ թե նոր քաղաք կառուցվեց, այլ Պարտավը վերակառուցվեց և հարմարեցվեց ժամանակի պահանջներին, և դրանից հետո քաղաքական կենտրոն է դառնում Ուտիքը: Պարտավում կենտրոնացան պարսից վարչական մարմինները՝ Աղվանից մարզպանի գլխավորությամբ:

Համաձայն Մովսես Կաղանկատվացու, Պարտավը կառուցել է Վաչէ Բ-ն՝ Պերոզի հրամանով: Սակայն, ինչպես հայտնի է, Պերոզը գահ է բարձրացել 459 թ. և պատերազմական գործողություններ է սկսել Աղվանքի դեմ: Հարց է առաջանում, թե Վաչեն երբ հասցրեց կառուցել Պարտավը, այն էլ՝ Պերոզի հրամանով: Կարծում ենք՝ թյուրիմացաբար է թագավորի անունը հայտնվում որպես քաղաքի հիմնադիր, և մենք համամիտ ենք Բ. Ուլուբաբյանի այն կարծիքին, որ «սրա մեղքը պետք է փնտրել X դարի շարունակողի մեջ, որը նման աղավաղումներ շատ ունի»²⁰:

որ Ուտիքը և Արցախը Աղվանից մարզպանությանը կցվեցին 451-481 թթ. ընթացքում [տե՛ս Հարությունյան Բ., Մեծ Հայքի թագավորության հյուսիս-արևելյան մարզերի վարչա-քաղաքական կազմությունը 387-451 թթ. (Բանբեր Երևանի համալսարանի, 1976, N 2, էջ 92)]: Ա. Հակոբյանը կարծում է, որ 428 թ. նախ Ուտիքը, ապա 450-451 թթ. ապստամբությունից հետո Արցախը միացվեցին Աղվանքին (տե՛ս Աкопян А. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Е., 1987, с. 114): Իսկ Հ. Սվազյանը Աղվանից մարզպանության ստեղծման թվական է նշում 461 թ. (տե՛ս Սվազյան Հ., Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, էջ 212):

¹⁵ Աշխարհացոյց, էջ 29:

¹⁶ Երեմյան Ա., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Ե., 1963, էջ 34, 120:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Ուլուբաբյան Բ., Հայոց Արևելից կողմանց եկեղեցին և մշակույթը, Ե., 1998, էջ 5:

¹⁹ Կաղանկատուացի, էջ 42:

²⁰ Ուլուբաբյան Բ., Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, էջ 154:

Իշխանությունը հաստատելով Աղվանքում՝ պարսից արքունիքը շարունակեց ամբողջ տարածաշրջանն իրեն ենթարկելու ծրագրի հաջորդ մասն իրականացնել՝ գրավել Կասպից ծովի արևմտյան շրջանները և լուծել մեկ այլ կարևոր խնդիր՝ կասեցնել խազարա-կան արշավանքները, որոնք արդեն սպառնալիք էին ներկայացնում պարսից տիրապետության համար Կասպից ծովի ափամերձ շրջաններում, ինչու չէ՝ նաև Աղվանքում: Վերոհիշյալ տարածքների նըվաճումը և խազարների առաջխաղացման կասեցումը բաժին հա-սան Կավատ Ա-ին (488-531 թթ.) և Խոսրով Անուշիրվանին (531-578 թթ.): Այդ առումով Բալաձորին և Յակուտ ալ Համավին, ունենալով պարսից մատենագիրների վկայությունները, նշում են. «Խազարները ասպատակում էին երկրի խորքերը և հաճախ առաջանում մինչև Դայնավար: Սրա վրա Կուբազ իբն Ֆիրուզ թագավորը (Կավատ - Վ. Ա.) մի զորավար ուղարկեց իր մեծագույն զորավարներից՝ 12 հազար զորքով, որն Առանը ընկճելուց հետո հասավ առ-Ռաս կոչված գետի մոտ և գրավեց այնտեղից մինչև Շիրվան տարածվող երկրամասը: Կուբազն ինքը, իր զորավարի հետևից հասնելով, խազարներին տեղահան անելուց հետո, Առանում կառուցել տվեց Բայլական և Բարգաս (Պարտավ - Վ. Ա.) քաղաքները. վերջինը ամբողջ սահմանային քաղաքների կենտրոնն էր, նաև Կարբալան՝ խազարների դեմ: Այս նա կառուցեց Սուդ ալ- Լաբանը՝ Շիրվանի և Ալանաց երկրի մեջտեղը և Սուդ ալ- Լաբանի շուրջը կանգնեցրեց 360 քաղաքներ, որոնք քանդվեցին Բաբ ալ- Աբվաբի շինվելուց հետո: Կուբազից հետո թագավորեց իր որդին՝ Անուշիրվանը, որը կառուցեց ալ- Շաբրան քաղաքը, ինչպես նաև՝ Մասկատ քաղաքը: Հետո կառուցեց Բաբ ալ- Աբվաբը, որը Աբվաբ կոչվեց, որովհետև շինված էր լեռնային անցքի վրա և այդ վայրերում բնակեցրեց Մայասջին կոչված մի ժողովուրդ: Հետո կառուցեց Առանի մեջ Շաքիի և Կամիրանի դռները, ինչպես նաև Ալ-Դուդանիա կոչված դուռը...»²¹:

Գրավելով վերը նշված շրջանները և դրանք միավորելով Աղվանից մարզպանության մեջ Մասանյանները հասան իրենց նպատակին՝ ամբողջ տարածաշրջանն ընկավ Պարսկաստանի տիրապետության տակ: Նվաճված մերձկասպյան շրջանները տրվեցին Աղվանից մարզպանությանը, ինչի հետևանքով հյուսիսում մարզպանության սահմանը հասավ մինչև Դերբենդ: Աղվանից մարզպանությունը, արդեն ընդգրկում էր «զբուն աշխարհն Աղուանից որ ընդ մեջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լ երինն»²², հայկական Ուտիքն ու Արցախը, Չոդը, Շրվան, Խսրվան, Ղեկաց ու Թավասպարաց շրջանները՝ կազմելով 72.204 կմ² տարածություն²³: Սրանք մարզպանության առավելագույն սահմաններն էին նրա ամբողջ գոյության ընթացքում, որն ինչպես կտեսնենք, երկար կյանք չունեցավ:

²¹ **Баладзори.** Книга завоевания стран, перевод П. Жузе, Баку, 1927, с. 6. Յակուտ ալ-Համավի, Աշխարհագրական բառագիրը (Արարական աղբյուրները՝ Հայաստանի և հարևան երկրների մասին), կազմեց Հ. Նալբանդյանը, Ե., 1965, էջ 17:

²² Աշխարհացոյց, էջ 29:

²³ **Շրեմյան Ս.,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 34, 120:

Տարածաշրջանում արդեն տեր ու տնօրինություն անող Սասանյան Պարսկաստանը տիրոջ իրավունքով վերաձևում էր Այսրկովկասի քաղաքական քարտեզը: Ամբողջ Պարսկաստանը բաժանվեց չորս մասի՝ քուստակների: Պարսկաստանի այս վերջին վարչական բաժանումը մանրամասն նկարագրված է «Աշխարհացոյց»-ում. «Քուստի Կապկոհ, որ է կողմն Կալկասու լեռանց յորում են աշխարհ երեքտասան, Ատրպատական, Արմն (որ է) Հայք, Վարջան՝ որ է Վիրք, Ռան՝ որ է Աղուանք, Բալասական, Միսական, Առէ, Գեղան, Շանճան, Դըլմունք, Դմբաւանդ, Տապրըստան, Ռուան, Ամլ...»²⁴: Քուստակների ստեղծումը հետապնդում էր մի նպատակ՝ հեշտացնել նվաճված երկրների կառավարումը: Այս ռեֆորմով Պարսկաստանը վերջնական և ամբողջապես իրեն ենթարկեց Աղվանքը, Մեծ Հայքը և Վիրքը, ինչին ձգտում էր իր գոյության ողջ ընթացքում:

Աղվանից մարզպանությունը լրիվ և ամբողջական տեսք ստացավ երկարատև ժամանակաշրջանում, այն է՝ կազմավորվելով 461 թ., երբ դադարեց գոյություն ունենալ Աղվանից թագավորությունը, մինչև Կավատի և Խոսրով Անուշիրվանի նվաճումները Կասպից ծովի արևմտյան ափերին: Այս երկրորդ փուլը ընդգրկում է մերձկասպյան երկրների միացումը մարզպանությանը և ամբողջությամբ ենթարկումը մարզպանին, այլ խոսքով՝ պարսկական արքունիքին:

Այսպիսով՝ ենթարկվելով Սասանյաններին, այնուամենայնիվ, Աղվանից մարզպանությանը կցված տարբեր միավորումները շարունակեցին իրենց գոյությունը՝ որպես ինքնուրույն վարչական միավորներ, ինչը պայմանավորված էր մարզպանության էթնիկական խայտաբղետությամբ: Ճիշտ է, մարզպանությունը կրում էր «Աղուանք» անունը, և թվում է, թե այն միատարր էր, բայց դա միայն առաջին հայացքից: Երբ սկսվեց մարզպանության տրոհման գործընթացը, հայկական Ուտիքում և Արցախում կազմավորվեց հայկական մի ինքնուրույն իշխանություն, որը սկսեց հանդես գալ «Աղուանք» անունով:

ФОРМИРОВАНИЕ АЛУАНКСКОГО МАРЗПАНСТВА

ВАРДАНЯН А. М.

Резюме

Персидский царский двор в 50-60 годы насильственно подавил антиперсидские восстания в Закавказье, в результате в 461 г. было низложено правительство алуанкского правителя Ваче II. По праву хозяина перекроив политическую карту региона, персидский царь Пероз (457-484 гг.) соединил армянские губернии Утик и Арцах с марзпанством Алуанка, создав новую административно-политическую единицу, в состав которой входили также Прикаспийские губернии.

²⁴ Աշխարհացոյց, էջ 40: